«ԱՆՁՆԱԿԱՆ ՍԵՆՅԱԿ» ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՐԳԸ.

Հարգելի բաժանորդ, այս ուղեցույցի միջոցով Դուք կարող եք ծանոթանալ «Անձնական սենյակ» ապահով մուտք գործելու կարևոր պայմաններին:

Մուտքագրելով ID համարը որպես օգտագործողի անուն (user name) և գաղտնաբառը՝ Դուք մուտք եք գործում Ձեր «Անձնական սենյակ»:

1 Եթե գաղտնաբառը համապատասխանում է անվտանգության պահանջներին, ապա կարող եք «Անձնական սենյակի» միջոցով գործարքներ իրականացնել:

---

2 Եթե բաժանորդագրության ժամանակ Դուք նշել եք էլ. հասցե և Ձեր ներկայիս գաղտնաբառը չի համապատասխանում անվտանգության պահանջներին, կհայտնվի **հետևյալ հաղորդագրությունը.**

Հարգելի բաժանորդ,

Ձեր ներկայիս գաղտնաբառը չի համապատասխանում անվտանգության պահանջներին **(այն պետք է պարունակի առնվազն 8 լատինատառ նիշ՝ մեծատառերի և փոքրատառերի համադրությամբ (a-z, A-Z), և թվեր՝ 0-9):**

Գաղտնաբառը փոխելու համար խնդրում ենք սեղմել **հղումը:**

Հղումը սեղմելուց հետո հայտնվում է համապատասխան էջ, որտեղ անհրաժեշտ է նշել մուտքանունը (ID համարը) և բաժանորդագրության ժամանակ նշված էլ. հասցեն՝ գաղտնաբառի փոփոխման համար նախատեսված **հղումը** ստանալու համար.

Ձեր գաղտնաբառի վերականգնման համար հղումն արդեն ուղարկվել է Ձեր էլեկտրոնային հասցեին:
Խնդրում ենք սեղմել **հղումը**՝ գաղտնաբառի փոփոխությունը կատարելու համար:

Հղումն ակտիվ է **24 ժամվա ընթացքում:**

Հետևելով հղմանը՝ հայտնվում է պատուհան **նոր գաղտնաբառը ներմուծելու համար.**

3 Եթե բաժանորդագրության ժամանակ նշել եք միայն էլ. հասցե, սեղմեք **«Մոռացե՞լ եք գաղտնաբառը»** հղումը: Հղումը սեղմելուց հետո հայտնվում է էջ, որտեղ անհրաժեշտ է նշել մուտքանունը (ID համար) և բաժանորդագրության ժամանակ նշված էլ. հասցեն: Հետևելով Ձեր էլ. հասցեին ուղարկված հղմանը՝ հայտնվում է պատուհան գաղտնաբառը ներմուծելու համար:

4 Եթե բաժանորդագրության ժամանակ Դուք չեք նշել էլ. հասցե, և գաղտնաբառը չի համապատասխանում անվտանգության պահանջներին, կհայտնվի հետևյալ հաղորդագրությունը՝

Հարգելի բաժանորդ,

Ձեր գաղտնաբառը չի համապատասխանում անվտանգության պահանջներին **(այն պետք է պարունակի առնվազն 8 նիշ՝ մեծատառերի և փոքրատառերի համադրությամբ (a-z, A-Z), և թվեր՝ 0-9),** ինչպես նաև առկա չէ էլ. հասցե:

Ծառայություն ավելացնելու/սակագնային պլան փոխելու կամ թարմացնելու համար Ձեզ անհրաժեշտ է ունենալ էլ. հասցե և «ուժեղ» գաղտնաբառ:

Խնդրում ենք այցելել «Յուքոմ» ընկերության սպասարկման կենտրոններ:

Նկարագրված գործողությունները կատարելուց հետո Դուք կկարողանաք իրականացնել գաղտնաբառի փոփոխություն 2-րդ կետում նկարագրված քայլերով:

5 Գաղտնաբառի փոփոխություն կարելի է կատարել «Անձնական տվյալներ» բաժնում՝ նշելով.

- առկա գաղտնաբառը
- նոր գաղտնաբառը
- նոր գաղտնաբառի հաստատում:

Հաստատելուց հետո Ձեր գաղտնաբառը փոխվում է, և հայտնվում է համապատասխան հաղորդագրություն:

6 Էլեկտրոնային հասցեի փոփոխություն կարելի է կատարել «Անձնական տվյալներ» բաժնում՝ նշելով նոր էլեկտրոնային հասցեն: Հաջող փոխարինումից հետո հայտնվում է համապատասխան հաղորդագրություն: